ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղղարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Ռուսահիմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Դանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լլլայ։

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ եւ դրամական խմբագրութեան

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Մ. Գեսսներգասսե 14 Wien (Austria) K. P. Kalemkarian

WIEN BESTELL 2 Kreuzer

Ա Զ Դ

—

Պուլկարական Գիմնազիոնի ուսուցիչ մը, կուզէ պուլկարերէնի մասնաւոր դասեր աւանդել նոյնպէս և ուրիշ առարկաներ, գիտէ և ֆրանսերէն։

Հաղցէ, «Շարժումի» խմբագրատունը։

ԹԱԳԱԿԻՐ ԿՕՄԻՔԸ

—

«Թանը» հաղորդեց որ Սուլթանը հրամայել է Բարձրագոյն Դրան՝ անմիջապէս կարգադրել հայոց Պատրիարքի հետ ունեցած խնդիրները. իսկ մեր թղթակիցը հաղորդում, է որ Թուրքիոյ մայրաքաղաքում կըրկին մեծ իրարանցում է թագաւորում։

Ի՞նչ պատահեց արդեօք Սուլթանի հետ. ինչո՞ւ նա կրկին սկսեց զբաղվել հայկական հարցով։ Այդ ինչ խնդիրներ են, որոնց կարգադրելով Սուլթանը ուզում է հայ ժողովրդին բաւականութիւն տալ. այն ժողովրդին, որ դիշերային սարսափելի ուրուականի նման օր ու ցերեկ հանգիստ չէ տալիս կարմիր վեհապետին—իր ոսկեղէն պալատում։

* * *

Սուլթանը հրամայում է բաւականութիւն տալ հայերին հա՞, հա՞, հա՞... Ի՞նչ բաւականութիւն։ Ճշմարիտ երեւելի կոմիք է այդ Սուլթան կոչված արարածը. թագակիր, յօշոտուած մարդկանց վէրքերը ծաղրող և նրանցով զուարճացող կոմիք։ Եւ այդ միտպետ ու բռնակալ կոմիքը իր ծաղրածութիւնները կատարում է բռնակալական աշխարհի ոսկեզօծ բեմի վրա...։

* * *

Այնուամենայնիւ կոմիքն հայասիրական դիմակով բեմ դուրս գալու պատճառները կան։ Ինչպէս երեւում է Սուլթանի պոչը կրկին սեղմել են. այն պոչը որ փաթիշահը թափահարած միջոցին սասնեակ հազարներով հայ միանգամից հնձում և գետին է տապալում։

Ի հարկէ Սուլթանին հայի վրայ մտածել ստիպողները Օրմանեան էֆէնտին և նրա արժանաւոր աջակից հայ էֆէնտի փաշաները չեն։ Ոչ. նրանք երբեք չեն սեղմի Սուլթանի հայահունձ պոչ մանդալը. այլ կը լիզեն աղօթքով, երկիւղածութեամբ և սարկական գոհութեամբ։

Թո՛ղ լիզեն. հայ կուսոյ տարրի փոյթը չէ։ Նա մի նպատակ ունի. սեղմել, կտրել կայսերական այդ արիւնոտ պոչը և նրան զօրավիգ լինող ազդեցիկ ստրուկներին...

* * *

Մի քանի ամիս առաջ վեհապետ կոմիքը բաւական հանգիստ էր. նա նոյնիսկ մասնակցում էր այն մեծ կատակերգութեան ուր թագակիրների ներկայացուցիչները հաւաքվել էին ազգերի ճակատագիրը որոշելու, ի հարկէ առանց այդ ազգերի տրամադրութիւնը հարցնելու։ Կարմիր կոմիքը հեգնական ժպիտը երեսին կատարում էր իր դերը Լահէի մէջ. զարթ և ուրախ, հայերին բոլորովին մոռացած. բայց որտեղից որ էր վրա հասաւ արտաահմանի հայութեան բողոքող պատերազմը և պարզեց որ այս ժողովը միայն կատակերգութիւն չէ. կայ և նրա սեւ, արիւնոտ ողբերգական մասը։ Դրա տպաւորութիւնը դեռ թարմ, եկաւ և մակեդոնացի-հայ յեղափոխական մարմինների միացած յայտարարութիւնը. մի քիչ յետոյ էլ արտասահմանի հայութիւնը փառաւոր ապտակ հասցրեց Սուլթանի հաւատարիմ գործակից Օրմանեանին—նրան ազգուրաց և դաւաճան յայտարարելով։

Եըլտըզի կոմիքը չանթահար եղաւ. նրա սրտում արդէն գող կար, վաղուց չէր, որ նա ստացել էր Հայ. Յեղ. Դաշնակցութեան յայտարարութիւնը՝ Արթին փաշայի միջոցաւ։

Եւ ահա այս բոլոր երեւոյթները սեղմեցին կարմիր Սուլթանին և նա դիմակը փոխեց. նրա արիւնոտ շրթունքների վրա երեւան եկաւ հայասէր ժպիտը։

* * *

Օհ, աշխարհահռչակ, արիւնասէր միապետ կոմիք, հրաշալի ծամածռութիւններ ունես. և ամէն մի ժպիտիդ տակ հազարներով հայի մահ կայ թագնուած։ Գիտենք, լաւ գիտենք։ Հրաշալի կերպով ես կատարում դերդ։ Բայց մենք ծափահարելու տրամադրութիւն չունենք...։

Այնուամենայնիւ գնահատում ենք քեզ. մի վհատուիր. հայ ժողովուրդը պատրաստվում է, իր բոլոր ուժերը լարում քեզ արժանաւոր կերպով վարձատրելու։ Եւ կը վարձատրուիս...։

Գիտես ի՞նչ գնով։ Այն գնով որով վարձատրում են արիւնառուշտ բռնակալներից տանջված, բայց կատաղած ապստամբ սարուկները... որոնք այրվում են վրէժով, ազատութեան ծարաւով։

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի՞ՆՉ ԿԱՆՑՆԻ ԿԸ ԴԱՌՆԱՅ

—

Կ. Պոլիս, 9 Յուլիս

Սուլթանի մայրաքաղաքին մէջ անսովոր իրարանցում մը կայ, անսովոր իրարանցում մը կայ նաեւ Եըլտըզի և Բ. Դրան մէջ։ Որու որ հանդիպիս սա խօսքը կը լսես. «ի՞նչ կայ, ի՞նչ կանցնի կը դառնայ»։ Ոմանք կըսեն թէ Լահէի Խաղաղութեան Դեսպանախորհուրդէն աննպաստ լուրեր կուգան, Տարտանելի և Սեւ ծովու բերաններուն բացումն կը պահանջեն տէրութիւնք, նոյնպէս Հայաստանի և Մակեդոնիայի մէջ բարենորոգումն։ Այս տողերը գրողն եւրոպական կարեւոր թերթերէն ոմանց առօրեայ ընթերցող ըլլալով՝ անշուշտ քաջ գիտէ թէ Լահէի Խաղաղութեան ժողովոյն որոշումներն դեռ գաղտնի կը մնան. բացի մի քանի անկարեւոր որոշումներէ, դեռ պաշտօնապէս ոչ է կարեւոր որոշում հրապարակ չելաւ. միեւնոյն ժամանակ անհերքելի է թէ Լահէի մէջ գտնուող քանի մը թղթակիցներ պարապ չմնալու համար ասոր անոր կարծիքներն հաւաքելով իրենց թերթերուն կը ղրկեն։

Լահէի Խաղաղութեան Դեսպանախորհրդոյ որոշումներուն սպասելով հանդերձ՝ կուգամ մի քիչ տեղեկութիւն տալ Թուրքիոյ նկատմամբ։ Ընթերցողներն մինչեւ յարդ անշուշտ տեղեկացած են Մուշի մէջ վերջերս պատահած կոտորածը։ Այս կոտորածը տեղի ունեցաւ ճիշդ այն ատեն՝ երբ Լահէի Դեսպանախորհրդոյ երրորդ նիստը տեղի կունենար։ Սուլթանի կառավարութիւնը նախ ուզեց ծածկել այս կոտորածը, յետոյ ինանց հայոց վրայ նետել. վերջապէս, երբ տեսաւ որ անկարելի է, քիւրտերուն վրայ նետեց յանցանքը խօստանալով զանոնք պատժել։ Մուշի կոտորածին լուրը մեծ յուզում պատճառեց Խաղաղութեան Դեսպանախորհրդոյ և ռուսական շրջանակներուն մէջ։ Ռուսական և ֆրանսական դեսպաններն իրենց կառավարութիւններէ ստացած հրահանգին համեմատ պալատ երթալով եւ աղդուապէս բողոքելով շեշտեցին որ այս կոտորածին պատասխանատուութիւնը Սուլթանի վրայ կիյնայ. միեւնոյն ժամանակ Վանայ ռուսական և ֆրանսական հիւպատոսներն Մուշ ղրկուեցան կոտորածը քննելու համար։ Սուլթանը դեսպանաց բողոքին վրայ պաշտօնանկ ըրաւ Մուշիկառավարիչը և խոստացաւ դատարանի առջեւ հանել։

Տասը օր վերջ ռուսական դեսպանը դարձեալ ազդու նօթ մը տուաւ Սուլթանի որ մեծ յուզում պատճառեց Եըլտըզի և Բ. Դրան մէջ։ Ինչպէս կը տեսնենք անգլիական կառավարութիւնը բոլորովին անտարբեր մնաց այս կոտորածին։ Անգլիոյ ժողովուրդը այս տեսնելով յուզուեցաւ և բարլամէնթի մէջ կառավարութենէն բացատրութիւն պահանջեց եւ ի պատասխան՝ կառավարութիւնը ըսաւ թէ «թագուհւոյն կառավարութիւնը լիակոր իշխանութիւն տուած է Կ. Պոլսոյ դեսպանին որպէս զի ուրիշ դեսպանաց հետ համաձայն գործէ այս տեսակ

խնդրոց նկատմամբ»։ Ռուսական դեսպանի ուած նոթին վրայ Օսլթանի չատ նեղը ինկած սկըսաւ միջոց մը խորհիլ. այն ալ գրեթէ յաջողցաւ գոնէ իր կարծիքով։ Ոստիկանութեան նախարարէն հրահանգուած երկու լրտեսներ(*), մին հայ միւսն թուրք, կարմիր կնիքով յայտարարութիւններ փակցուցին Սամաթիոյ պատերուն վրայ, իբր թէ հայոց կողմէ նոր ցոյց մը տեղի պիտի ունենայ։ Այս լուրը Սուլթանի ականջը հասնելուն պէս, գիշերանց Օրմանեանը Եըլտըզ կը կանչէ և Լահէի Խաղաղութեան Դեսպանախորհրդոյ ուղղեալ կանխաւ պատրաստուած մը հեռագիր ստորագրել կուտայ։ Սուլթանը այս ընելով դարձեալ սիրտը չհանդարտեցաւ. սկսաւ ինքնապաշպանութեան դիմել. չորրորդ բանակի կրկնապատկուելուն, Կարինի և Խարբերդի զօրաց թիւը աւելնալուն և ռազմագիտական ճամբաներուն պատրաստման հրաման ըրաւ։ Այս հրամանը տենդոտ փութկոտութեամբ յառաջ կը տարուի։ Ուրիշ դէպքմը վրայ գալով՝ Թուրք կառավարութիւնը աւելի նեղն ինկաւ և պատճառ եղաւ Ռուսօ-Թրքական սահմանագլխոյն առժամանակեայ փակման։ Ռուսական սահմաններուն մօտ քէրտերը կը յարձակին Գաղա Տարմա գիւղին վրայ և հարուստ Մարտիկ աղայի ստացուածքը ամբողջովին կողոպտելէն վերջ, ընտանիքին 17 անդամներն անգթօրէն կը խողոչեն։ Այս դէպքին վրայ ռուսական կառավարութիւնը հրամայեց որ այն գաղթական հայերը՝ որոց վերադարձը որոշուած էր, առ այժմ մնան մինչեւ որ խիստ կարեւոր քայլ մը առնուի քիւրտերուն նկատմամբ։

ՁԵԼՈ

(*) Այս լրտեսներուն խարդախութիւնը երեւան ելնելով իբր թէ բանտարկուեցան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. ՁԵՐԱԶ ՑԱՄԱԴԷՐՏԱՄ ԵՒ ԻԼԱՀԷ

Հօլանտական խորհրդարանի բողոքական կուսակցութեան պետը, ուսուցչապետ Բէօյրը, իր ազգին համար ամօթ համարելով Սուլթանի դրդմամբ Պ. Ձերազի բանախօսութեան արգիլուիլը ոստիկանութեան կողմէ, իրեն հետ միացուցեր է կաթոլիկ եւ ազատական կուսակցութեանց գլխաւոր անդամներէն մի քանին (միութիւն մը որ չատ հազուադէպ է Հօլանտայի մէջ) ստիպողական հրաւէր ուղղած է Պ. Ձերազին, պաղատելով որ Հօլանտայի պատուոյն խնայէ եւ վերադառնայ իր բանախօսութիւնն ընելու։ Պ. Ձերազ կը խոստանայ խնայել Հօլանտայի պատուոյն եւ վերադառնալ. բայց, առիթէն օգուտ քաղելով, ոստիկանութեան արգիլած բանախօսութենէն աւելի կծու բանախօսութիւն մը կը պատրաստէ «Խաղաղութեան Վեհաժողովը եւ հայկական Ջարդերը» տիտղոսով, խայտառակելու համար Թուրք պետութեան անզգամութիւնն, մեծ պետութեանց անզգայութիւնն եւ Լահէի ոստիկանութեան անիրաւութիւնն, եւ յուլիս 6ին կը հասնի Ամսդէրտամ։ Պ. Բէօյրը, բայց կառքով կայարան գալով, իր տունը կը տանի Պ. Ձերազը եւ թիւը կառնու զայն ամէն անգամ որ Պ. Ձերազ փողոց կելնէ։ Ոստիկանները հեռուէն կը դիտեն, այլ, Պ. Բէօյրերի ազդեցութենէն վախնալով, չեն համարձակիր իր հիւրին մօտենալ եւ նեղել զայն, ինչպէս նեղած էին Երիտասարդ Թուրքիոյ պատուիրակները։ Յուլիս 7ին, Ամսդէրտամի մեծագոյն սրահներէն միոյն մէջ, ուր 1,000 է աւելի ընտիր բազմութիւն մը հաւաքուած էր, կարգադիր մասնախումբի երեք անդամներն, Տեարք Բէօյրը (բողոքական երեսփոխան), Վէր Մէօլըն (կաթոլիկ երեսփոխան) եւ Լիֆթինկ (ազատական երեսփոխան), իրենց շքանշանները կախած բեմը ելան իրենց հետ բերելով Պ. Ձերազը։ Պ. Բէօյրը, Հօլանտայի կլատանը, հանճարեղ անձնաւորութիւն մը որ 138 գիրք հրատարակած է զանազան լեզուներով, ազգու բանախօսութեամբ մը ժողովրդին ներկայացուց Պ. Ձերազը. սրուն դիմացը նստած էր իբր պարզ ունկնդիր ոստիկանութեան պետը, եւ հրաւիրեց որ ուզածը խօսի, կարգադիր մասնախմբի պատասխանատուութեանը տակ։ Պ. Ձերազ մէկ ժամի չափ խօսեցաւ, ստէպ ամենաջերմ ծափերով ընդհատուած։ Երբ, իբր վերջաբան, Հօլանտական ազգի համակրանքը խնդրեց խաչեցեալ Հայաստանի համար եւ, խօսքը թագուհիին ուղղելով, որ կը պաշտուի իր ժողովրդէն, յանուն 300,000 հայ նահատակներու մայրերուն, կիներուն, քոյրերուն ու աղջիկներուն խնդրեց իրմէ ծնրադիր որ Հայոց դահճապետին ներկայացուցիչներուն չը թողու որ իրենց շրջունքը կրցուցեն իր հրեշտակային ճերմակ ձեռքերուն. ժողովուրդը տասը վարկեանի չափ ծափահարեց Ջերմազին, այրերը իրենց գլխարկը օդը նետելով. կիները իրենց թաշկինակը շարժելով, եւ ամէնքը վիվ Լ'Առմի-

ԶԸ ՑԻՇՈՒԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Աղեքսանդրիա, 2 Յուլիս

Մասնաւոր հեռագրով հաղորդած էինք ձեզ, Օրմանեանի անուան հոս ալ «չի յիշուիոի դատապարտուիլը։ Եթէ հանրային զայրոյթին այս արդար դատապարտանը՝ Պուլկարիայի մէջ կատաղութիւնը գրգռեց դասակարգի մը, որ իր տիպար պատրիարքին դատապարտութեանը մէջ՝ իր նշանակումը միանգամայն կըզգար՝ անտարակոյս չատ աւելի մեծ կնճռոտութիւններ պիտի յարուցանէր հոս, ուր այդ տրիարքական դասակարգին ներկայացուցիչները աւելի ոտուար են իրենց համախոհ արբանեակներով և աւելի խածան, չնորհիւ այն ընդարձակ առանձնաշնորհումներու, զորս կը վայելէն «հզօրի իրաւունքով»։

Սակայն «չի յիշուիոի առաջին փորձը որ կատարուեցաւ անցեալ կիրակի օր՝ այնպիսի հանգամանքներու մէջ տեղի ունեցաւ, որ դեռ անորոշ կը մնայ մեր ջոջերու վերաբերումը։

Տեղւոյս միթինկին կարգադիր մասնախումբը կանխապէս մասնաւոր շրջաբերականներով՝ բացատրելով ժողովրդին՝ Օրմանեանի բռնած աղգավնաս ընթացքը իր դժբաղդ գահակալութենէն ի վեր, հրաւէր կարդացած էր միահամուռ բողոքով արգիլելու անոր անուան յիշատակութիւնը եկեղեցիին մէջ։ Հետեւաբար սովորականէն ոտուար բազմութիւն մը խռնուած էր այդ օր եկեղեցին և ամէն ոք կոկորդը մաքրելով անհամբեր կը սպասէր «եւս առաւելոյ»ին։ Երբ վերջապէս քահանան կաթողիկոսին ու Երուսաղէմի պատրիարքին անունները յիշատակելէ ետքը ևը կցեց Օրմանեանի անունը յիշելու, որոտընդոստ «չի յիշուի» մը խեղդեց իր ձայնը և խեղճը ստիպուեցաւ «եւ տուր մեզ երկայն աւուրս»ը հասցնելով օձիքը ազատել։ Միւնոյն աղաղակը կրկնուեցաւ նաեւ «Գոհութիւն»ի ատեն, բայց այս անգամ հազիւ զօրեց խափանելու անճռռնի ոռնոցը աւագերեց Վահրամ վարդապետին, որ ժողովուրդին արդար պահանջումը խաղաղաբար ընդունելու համար նախընթաց օր իրեն եղած դիմումը մերժելէ ետքը՝ այդ օրը դիտմամբ խորան ելած էր, Օրմանեանին անունը յիշելու։ Այս քաջութեան համար իրաւացընէ խաչի մը արժանի է իր պարտապանաց փորը...։

Ժողովուրդին այս առաջին ցոյցը յաջողութիւն դտաւ, սակայն խնդիր է թէ ջոջերը պիտի ներեն այս «յանդգնութեան»։ Այդ օրը Թաշ. Խորհուրդի գլխաւոր անդամները բացակայ էին, միւսներն ալ լոկ հանդիսատես ըլլալով բաւականացան։ Կարծեմ թէ հակառակ տարածուած յուզումներուն՝ ասոնք չէին յուսար որ ժողովուրդը կրնայ այսպիսի քայլ մը առնել և այս պատճառով չէին խորհած կանխարգել միջոցներու վրայ։ Ինչ եւ իցէ վաղը Լուսաւորչի ատն է՝ միւս օրն ալ կիրակի, այս երկու օրուան մէջ անշուշտ կը պարզուի իրերու վերջնական կերպարանքը, զոր կը տեղեկացնեմ ձեզ։

Ամէն պարագայի մէջ յուսանք որ Աղեքսանդրիոյ ժողովուրդը՝ հակառակ ամէն արգելքներու՝ պիտի գիտնայ յարգել տալ իր կամքը։

ԿԱՐԻՃ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՔԱՑԼ ՄԸ

Փրովիտենս, 26 Յունիս

Փրովիտէնսի հայ երիտասարդութիւնը նորէն ցոյց կուտայ իր պարտքը եւ կոչումը հասկընալու ընդունակութիւնը։ Քանի մը շաբաթներէ ի վեր է որ կազմուած է զինավարժական խումբ մը մարդ սպանելու դիւրին կերպերը սորվելու համար։ Նպատակը հրէշական և դժոխային է. բայց ինչ ընենք, մեր ազգին ներկայ պարագաներուն մէջ գընահատելի, անհրաժեշտ և նուիրական է հայերուս համար։ Մեզ կը մորթեն. մենք ալ պիտ սարվինք, որ թոյլ չը տանք զմեզ մորթելու։ Փրովիտէնսի այս խումբը ամենաէական քայլը կառնէ։

Զինավարժները դեռ մեծ խումբ մը չեն կազմեր, հազիւ 25 հոգի է կը բաղկանայ. բայց յուսով ենք որ շուտով կատուարանայ ասոնց թիւը։

Արտասահմանի մէջ ապրող հայ գաղութներուն բոլոր երիտասարդները պէտք է օրինակ առնեն Փրովիտէնսի երիտասարդներէն. համոզուած ըլլալով թէ ազատութեան ու հանդիստ շունչ մը առնելու միակ միջոցին յեղափոխութեան՝ յաջող ելքին կարեւոր պայմաններէն մին զինավարժ ըլլալն է։

Ուստի, արտասահմանի երիտասարդներս, քանի որ այս հեռաւոր անկիւններէն անկարող ենք մեր հայրենիքի օգտին գործնական քայլ մը ընել, գոնէ վարժուինք և պատրաստուինք «Սրբազան» օրի մը դիմաւորելու... Աշխատինք զինավարժ ըլլալ, սիրել զէնքը սեղմել կուրծքերնուս։ Զէնքին սիրահարը «սրբազան» օրին նստած չի մնար, երբ վրէժը և ազատութեան գոչը զինքը հրաւիրեն։

Կ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սիլիստրէ, 7 Յուլիս

Շ. Կ. ստորագրող թրթռուկ թղթակից մը, նախկին «պատուելի» քաղաքիս արական նախակրթարանին, չանցեր էր Վառնա հրատարակուող թերթի մը մէջ՝ կլլեցնել թէ մեր վարժարանին այս տարուան հարցաքննութեանց ակներեւ արդիւնքը ուրիշ բան չէ եղած՝ եթէ ոչ նախորդ տարիներու մէջ հաստատուած պտուղ մը։

Այսպէսով, Շ. Կ., բարեխիղճ մշակ մը ձեւանալով՝ ելեր է շատուշ, երկու տարի ետքը՝ «ռէքլամ»ը ընել իր ամուլ և ցաստ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. ՁԵՐԱԶ ՑԱՄԱԴԷՐՏԱՄ ԵՒ ԻԼԱՀԷ

Հօլանտական խորհրդարանի բողոքական կուսակցութեան պետը, ուսուցչապետ Բէօյրը, իր ազգին համար ամօթ համարելով Սուլթանի դրդմամբ Պ. Ձերազի բանախօսութեան արգիլուիլը ոստիկանութեան կողմէ, իրեն հետ միացուցեր է կաթոլիկ եւ ազատական կուսակցութեանց գլխաւոր անդամներէն մի քանին (միութիւն մը որ չատ հազուադէպ է Հօլանտայի մէջ) ստիպողական հրաւէր ուղղած է Պ. Ձերազին, պաղատելով որ Հօլանտայի պատուոյն խնայէ եւ վերադառնայ

բեր պաշտօնավարութեան։ Արդարեւ, երեսի շատ հաստ կաշի ունենալու է Շ. Կ. որ նորէն կը համարձակի վարդագոյն ցուցնել ինչ որ սեւ է եղած յաչս Սիլիսարէի հայութեան։ Զի՞ յիշեր արդեօք, որ երկու տարի առաջ «վռնտուած» է վարժարանէն՝ իր յայտնի ապիկարութեան պատճառաւ։

Ամէն անոնք որ դպրոցական գործերէ կը հասկնան այս քաղաքին մէջ՝ կրնան վկայել թէ արական նախակրթարանը, 6—7 տարուան ժամանակամիջոցին մէջ, միայն անցեալ և այս տարի արդիւնք տուած է՝ շնորհիւ երկու երիտասարդ ուսուցիչներու։ 1897էն առաջ, երեք չորս տարի, նախակրթարանի վեկը, չգիտցուիր թէ ի՛նչպէս, մնայեր էր երկու անդրջրհեղեղեան բրածներու ձեռքը, որոնք մատղաշ տղոց ճիվմ հոգին ու միտքը խաթարելէ զատ ո՛եւ է օգուտ չեն տուած, և որոնցմէ մին է նոյն ինքը՝ Շ. Կ.

Երեւակայեցէ՛ք զինքը. պատուելի մըն է՝ որ 12 տարեկան աշակերտներուն միջնադարեան սքոլասթիք փիլիսոփայութիւն և քաղաքային տնտեսութիւն աւանդած է՝ զանց ընելով օհմային պատմութիւնը և ուրիշ շատ մը անհրաժեշտ առակներ։

Հա՞րկ է աւելի ծանրանալ։ Անշահ «քապօթէնդէ մը՝ որ դիպուածին մէկ խաղովը ուսուցիչ կըլլայ, ի՞նչ արդասիք կարելի է յուսալ։

Եւ մտածե՛լ թէ տակաւին մարմարը կը զգայ ուսուցչական թեկնածութեան։ Խեղճո՛ւկ, որ Պ. Գասպարին բացատրութեամբ՝ աւելի ուրիշ բան ըլլալու սահմանուած է։

Հ. Տ.

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ֆիլէմէն Աւգէրեանէ կը խնդրուի անգամ մը խմբագրատունս հանդիպիլ։

——)·(——

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Կիրակի առաւօտ, եկեղեցւոյ աւարտումէն անմիջապէս ետքը, քաղաքիս Ազգային վարժարանաց երկսեռ ուսանողներու տարեկան քննութեանց վիճակացոյցներու բաշխման հանդէսը կատարուեցաւ։

Եկեղեցւոյ մէջն ու շուրջը արդէն գրաւուած էր երկսեռ հանդիսականներու խուռն բազմութեամբ, երբ ուսանողները իրենց ուսուցիչներու առաջնորդութեամբ եկան և կեցան դասերը։

Հանդէսը բացուեցաւ երգ-աղօթքով մը, զոր սանուհիները երգեցին երկձայն, որուն յաջորդեցին արտասանութիւններ, արամախօսութիւն և երգեր. մէջ ընդ մէջ կարդացուեցան նաև Գ. Բ. և Ա. կարգերու վիճակացոյցները։

Հանդէսը իր ամբողջութեամբ շատ սիրուն եղաւ. արտասանուած կտորները, մանկական և հայրենասիրական, լաւ ընտրութեամբ եղած էին, որոնք, ինչպէս նաև երկձայն երգերը, հանդիսականներու կողմէ կրկնակի և բուռն կերպով ծափահարուեցան։

Վերջին խօսքը առաւ Տնօրէնը, Վահան Շահրիման և մանրամասն հաշուետուութիւնը ըրաւ իր և ընկերներու միամեայ պաշտօնավարութեան։

Յարգելի տնօրէնը իր տեղեկագրին մէջ բացատրեց թէ ի՞նչ անկերպարան և քաոսային վիճակի մը մէջ գտած էին վարժարանը, և թէ նոր ընտրուած պաշտօնէութիւնը ի՞նչ ճիգեր թափելու ստիպուած էր թէ աշակերտաց մէջ զարգացումի հաւասարութիւն հաստատելու և թէ ծրագրի մէջ գտնուած առարկաները աւանդելու։ Իր գոհունակութիւնը յայտնեց որ յաջողած էին ատոր մէջ, և առանց ականջ կախելու իրենց շուրջը սարքուած անխիղճ դաւերու, որոնք տարեգլխուն հետ ծնունդ առած, ու տարբեր ձեւերով և ուղղութեամբ շարունակուած էին մինչեւ վերջը, իրենց գործը առաջ տարած էին։

Տնօրէնը իր և ընկերներու շնորհակալութիւնը յայտնելով Պատ. Հոգաբարձութեան, որոնք կրցածնին ըրած էին վարժարանաց բարւոք մատակարարութեան համար, իր տեղեկագիրը վերջացուց խիստ կերպով պախարակելով բոլոր անոնք, որ առանց բան մը գիտնալու, միմիայն անձնական ճղճիմ հաշիւներէ մղուած կաշխատէին շինուած գործ մը քանդելու։

Ստորեւ կը հրատարակենք տեղեկագրի սոյն մասը։

Տնօրէնին խօսածները լաւ տպաւորութիւն գործեցին, և շատերը աճապարեցին անոր և իր ընկերներուն յայտնել իրենց անկեղծ շնորհակալութիւններն և շնորհաւորութիւնները։

Հանդէսը փակուեցաւ պահպանիչով մը, և հանդիսականները գոհ սրտով մեկնեցան տեսնելով իրենց զաւակներուն զգալի յառաջդիմութիւնը և վստահ ըլլալով թէ միեւնոյն կարող և խղճամիտ պաշտօնէութեան ձեռքին մէջ պիտի շարունակուի այն։

* * *

Վարժարաններու վիճակը այսպէս համառօտակի պարզելէս եւ հաշիւս փակելէս յետոյ, կուզեմ քանի մը դիտողութիւններս ալ մէջ տեղ դնել անկեղծօրէն, այսինքն այնպէս, ինչպէս որ կը մտածեմ։

Մեր պաշտօնավարութեան թերեւս առաջին օրերը, երբ կարգ մը անորակելի մարդիկ՝ սկսուած գործ մը խանգարելու ճիւաղային մտածումով, ժամկոչի պէս տունէ տուն կը պտտէին, հոգաբարձութեան եւ ուսուցչութեան ճիգերուն դէմ դժուարութիւններ յարուցանել կը փորձէին, հրապարակաւ կոչում ըրինք որ կա՛մ պապանձին եւ կամ յայտնի համարձակ ասպարէզ իջնան եւ յանուն ազգի շահերուն քաջութիւն ունենան ընել իրենց դիտողութիւնները, եթէ երբէք ունին։ Նոյնը կը կրկնեմ հիմայ։ Պարոններ, այո՛, ամենուն պարտքն է ամէն կարելի ջանք ի գործ դնել որպէսզի մեր վարժարանները գտնեն վերջապէս իրենց մարդ պատրաստողի, նկարագիր կազմողի մեծագոյն դերը։

Անհրաժեշտօրէն պէտք է վերջին ծայր խիստ ու անկողմնակալ ըլլալ դէպ այն մարմինները որոնք պաշտօն պիտի ունենան կրթական գործը ղեկավարելու եւ ուրուագիծ մը ապագան վճռելու։

Ոճիրներու էն մեծը կը գործեն ա՛յն մարդիկը որոնք ազգային վարժարաններու կարեւորագոյն գործը չաղապատուած կը գտնեն պակասութիւններով, վնասակար ուղղութիւններով ու լեզուին կըլլած, ձեռքերնին ծալած կը նստին ու թոյլ կուտան որ հարիւրաւոր զաւակներու մտաւոր ու բարոյական վիճակը անմարսելի դառնութիւններով խճողի։

Սակայն ո՛րքան դատապարտելի են այս կարգի անհոգ ու անտարբեր մարդիկը, նոյնքան եւ աւելի զզուելի, ձաղկելի են անոնք՝ որ առանց բան մը գիտնալու, առանց դէշն ու աղէկը հասկնալու, անձնական ճղճիմ ու լղճուկ հաշիւներով մութին մէջ դաւեր կը սարքեն, մուրացկանի ձեւով հոս ու հոն կը դեզերին, պառաւի պէս կը բամբասեն, ճշմարտութիւնը քօղարկելու անպատկառ վատութիւնը յանձն կառնեն, յստակ ջուրը կը պղտորեն, կը խառնակեն, վասնզի ատոնք, այդ ցածազգի, թղուկ հոգիները, անձն ու կիրքը գործէն զանազանել գիտնալու չափ անգամ մշակութիւն չունին, ու չեն կամենար որ աղէկ գործ մը առաջ երթայ։

Ընդունինք որ.

Զիկայ աւելի անկեղծ, աւելի համակրելի դէմք մը քան ա՛յն անձնաւորութիւնը որ ամէն հաշիւ, ամէն նկատում մեկդի թողած, բոլոր ուժովը կը մաքառի, որպէսզի կրթութեան գործը փրկէ ապիկարներու ձեռքէն եւ դայն հաստատէ ամուր կռուանի մը վրայ։

Նոյնպէս՝ ընդհակառակը, չիկայ աւելի լիրբ, աւելի ցած հոգի էակ մը քան այն մտքի զազրոտները որոնք իրենց կրքերուն, կաշիին եւ ստամոքսին հաշիւներէն միայն թելադրուած, կոպիտ ու տխմար յարձակումներով օրհասական ճիգեր կը թափեն վարժարան մը քանդելու։

Վարժարանները փրկելու համար խիստ ըլլանք, անողոք ըլլանք, բայց մեր գործունէութեան առաջնորդը պէտք է ըլլայ միայն եւ միայն ուսանող մանկտոյն իրական շահը։ Առանց ատոր՝ սերբունդ սպանող դահիճներ միայն կարող ենք ըլլալ։

* * *

——)·(——

նի (կեցցէ՛ Հայաստան) աղաղակելով։ Պ. Զերազ սոխպուեցաւ երեք անգամ բեմը ելնել եւ շնորհակալութիւն յայտնել։ Նոյնիսկ Հօլանտացիք ապշած էին իրենց պաղարիւն ցեղին այսքան խանդավառիլը տեսնելով։ Պ. Քէօյբերը, երկրորդ անգամ խօսելով, շնորհակալութիւն յայտնեց ատենապետին եւ վերջացուց վիվ Լ'Առմենի աղաղակելով. աղաղակ, որով սրահը թնդալ սկսաւ նորէն։ Յաջորդ օրը, տեղական մեծ թերթերէն իւրաքանչիւրը 5—6 սիւնակ նուիրեց հայերու նկարագրութեանն եւ Դայլ (Ժամանակ) լրագիրը յայտարարեց թէ, «թէեւ շատ տաղանդաւոր ատենաբաններ եկած էին Ամսդէրտամ բայց ոչ ոք յաջողած էր այս հայ ատենաբանին չափ յուզել ժողովուրդը»։

Պ. Զերազ յաջորդ օրը գնաց Լահէ։ Կայարան եկած էր Պ. Քէօյբերի կուսակիցներէն ազգային երեսփոխան Պ. Պոիւմէլքամբ, որ իր տունը տարաւ եւ թեւը առած փողոցները պտցուց մինչեւ Պ. Զերազի Լահէ մեկնիլը։ Այնպէս որ հոս ալ ոստիկանութիւնը չը համարձակեցաւ հայ պատուիրակին մօտենալ, եւ Սուլթանին զրկած 25 չքաղաքացիները պարապը գացին։ Լահէի կարգադիր մասնախումբը կազմուած էր զանազան կուսակցութեանց պատկանող երեսփոխաններէ եւ խմբագիրներէ, ընդ նախագահութեամբ ծերակոյտի անդամ կոմս Վան Աս Վան Վէօյքի։ Յուլիս 11ին, Տելեկէնցիա սրահին մէջ, նախագահը խուռն բազմութեան ներկայացուց Պ. Զերազը, որուն դիմացը նստած էր ոստիկանութեան պետը, Օսմանեան հիւպատոսին քովիկը, որ հօլանտացի հրեայ մըն է (բուն օսմանցիները ծակամուտ եղած էին), Պ. Զերազ հոս ալ գաւ այն խանդավառ ընդունելութիւն զոր գտած է յԱմսդէրտամ, եւ աւելին իսկ։ Տակպլատի խմբագրապետը գեղեցիկ ճառով մը շնորհակալութիւն յայտնեց իրեն, եւ ներկայից մէջէն արմատական կամ ընկերվարական երեսփոխաններ եւ ուրիշ շատեր եկան իր ձեռքը սեղմել։ Յիշեալ թերթը, յաջորդ օրը հանդէսը նկարագրելով, գրեց թէ ատենաբանը Հայկական ջարդերը նկարագրելով «զայրոյթով զողացուց իր ունկնդիրներն»։ Ամսդէրտամի զբրավաճառներէն մին յատուկ գրքոյկով հրատարակեց Պ. Քէօյբերի երկու ճառերն եւ Պ. Զերազի ընդարձակ բանախօսութիւնն։ Ոստիկանութիւնը, Պ. Զերազի նախորդ բանախօսութիւնը արգիլելով, Հայկական դատին ահագին ժողովրդականութիւն մը շահեցուց Հօլանտայի մէջ։ Ժողովուրդը խնդրած է Պ. Զերազէն նորէն գալ եւ բանախօսել յԱմսդէրտամ եւ ի Լահէ. եւ Պ. Զերազ խոստացած է, սա համոզմամբ թէ, քանի որ իրաւարարութեան մեայուն գրասենեակը Լահէի մէջ պիտի հաստատուի, հոն հայրենասիրական շարժում յառաջ բերելը կրնայ իր օգուտներն ունենալ։ Հայ պատուիրակը, որ առաջին անգամ տխրութեամբ հեռացած էր Լահէէն, այս անգամ յաղթանակով մեկնեցաւ։

* * *

——)·(——

Ուրախալի է տեսնել որ կրթութեան պահանջքը մեր բարքերուն մէջ մուտ գտած է ալ եւս։ Ամենէն ապէտ ընտանիքը, եւ առհասարակ ամէն մարդ, այլեւս համոզուած է, թէ տղան պէտք է դպրոց երթայ որպէսզի մարդ ըլլայ։

Սակայն զաւակ մը վարժարան նետելը միայն բաւական չէ։ Ասով մեր ծնողական պարտականութիւնը չի լմննար։ Ծնողքներուն պարտքն է հետաքրքրուիլ ու հասկնալ նաեւ թէ ի՞նչքան հմուտ է ուսուցիչը դաս աւանդելու, ի՞նչ կերպով կը խնամուին ու կը սորվին իրենց աղաքը, որքան հոգ կը տարուի աշակերտներու բարոյական մարդը շինելու մէջ, եւ դեռ ուրիշ շատ մը մանր մունր բաներ որոնք կապացուցանեն վարժարանին վարած կանոնաւոր կեանքը։ Հայրերն ու մայրերը, այո՛, անպայման պէտք է հասկնան այս ամէնը եւ ի հարկին, այսինքն եթէ գոհ մնան, ամէն միջոց ի գործ դնեն որպէս զի քանի մը չարչի ողորմելիներու գարշելի կրքին զոհ չերթայ իրենց սրտին կտորը եղող զաւակներու կրթութեան մեծագոյն գործը։

Գիտնանք որ առհասարակ մանուկները, տկար ու անպաշտպան, ամենէն թշուառ էակներն են արդի ընկերութեան մէջ։ Խեղճերը ոչինչ կրնան ընել իրենց շահերը պաշտպանելու, իրենց ապագան իրենց ձեռքովը փրկելու համար։

Ամէն բան մենէ, մեծերէն միայն կախեալ է։ Եւ վաղը վարժարանի դռնէն դուրս պիտի գան անոնք այնպէս որ մենք կամեցանք ու պատրաստեցինք զիրենք։

Բացարձակապէս անուրանալի եւ անժխտելի է այս ճշմարտութիւնը։

Ուրեմն հասկնանք որ ահաւոր է այն պատասխանատուութիւնը որ մեր ուսերուն վրայ կը ծանրանայ եւ որով մենք պարտական ենք մեր պզտիկները հոգալու։

Մեր ձեռքն է, մեծերուն ձեռքն է այսինքն, այդ փոքրիկները մտքով, սրտով ու հոգիով մեռցնել՝ կամ զանոնք փրկել։

Տհաս սերունդին դահիճը կամ պաշտպանը ըլլալու մէջ ընտրութիւն մը պէտք է ընենք։ Մենք, այսօրուան մեծերս, մեր կանխակալ կարծիքները, մեր ազիտութիւնը, մէկ խօսքով մեր յոռի դասախարակութիւնը եթէ սատցած ենք, բոլորը ուղղակի ընդունած ենք ժամանակին մենէ աւելի մեծ եղող սերունդէն։

Պէտք չէ երբէք որ մենք ալ նոյնը տանք մենէ պզտիկներուն։

Մեր կրքերը, մեր տիրացուական հաշիւները պէտք չէ բնաւ ներս մտնեն վարժարանէն։

Ողջմտանքով խորհինք, եւ ջանանք գո՛նէ սա մենէ պզտիկները փրկել այն պատուելիական տխուր դասախարակութենէն որուն զոհերն են մենէ շատեր։ Մեր մեծ նպատակը թող ըլլայ փոքրիկները կրթել աւելի բարոյական եւ աւելի գիտական մէթոտով։ Ջանանք պատրաստել անոնցմէ ա՛յնպիսի մարդիկ՝ որոնց նմանները կուզէինք ըլլալ։ մենք իսկ։ Անկախ, պարտաճանաչ ու ազատ մարդիկ պատրաստենք մենք՝

Որ դեռ եւս ազատուած չենք եւ մեր սրտերուն մէջ ուրիշ բան չունինք, բայց միայն տարտամ յոյսեր ու կերպոյն հաւատք մը։

Վ. ՇԱՀՐԻՄԱՆ

Վանա, 11 Յուլիս

——)·(——

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐ

(ԲԻԹՔԱՆԱԿԱՆ)

—

Աբաս—Ափ մը
Աղցան—Բանջարեղէն
Ամնիշ—Նետել (վրայէն նետել)
Անդիական—Հանդերձեալ (աշխարհքը)
Անժուր—Անհամ (կերակուր)
Անկ—Կոշ (սափորի, պուտկի եւ այլն)
Անցնել—Վիժիլ (կանանց)
Ապրոտ—Բանջարեղէն խոտ մը
Առնան կամ առանան—Դատն, խիստ
Բաջուկ—Եփուելիք խոտ մը
Բրըշտկել—Տարածուիլ, ցրուիլ (հոտ)
Գաւաթ—Փայտէ պնակ
Գրզուրտել—Կոուիլ (շուներու եւայլն)
Դոշկոռ—Պնդութիւն (վէրքի եւայլն)
Գօգոշ—Մատցածին ճիւաղ մը
Գոլ—Բոց
Դեմ—Զոյգ։ դէմ մը, զոյգ մը
Դրոշմել—Ծեծել
Դենել—Ապտուել
Դուր—Ծեծիչ սանդի
Եսինք—Իրիկուն
Եսորեղ կամ Եսոռիկ—Եա ետ երթալ
Երեսկ—Ծանծաղ
Երկրի մարդ—Օտար մարդ
Զեռուկ—Որդ վէրքի վրայ գոյացած
Էղիճ—Եղինճ, խայթող բոյս մը
Էղճել—Խայթել
Ըղիկ ճղիկ գաս—Դալարուլիս (անէծք)
Իչանկ—Ինչպէս
Լակ—Ջրոտ (կերակուր, ապուր)
Լաւլակ—Լալկան
Լոդիկ—Թրջուած, գինով
Լօփ—Կտոր ճաճոի
Խաձուիֆ—Կտոր
Խաշ—Փորոտիք
Խազել—Նախանձել
Խզոտ—Նեղ փողոց
Խոռ—Պակասաւոր
Ծաղկել—Բորբոսել, մգլել
Ծեսքել—Ծեծել, չարչրկել
Ծրծկան—Կաթ տուող կին
Ծկլաղ—Նայել (ծակէ մը)
Կաշիկ—Հողաթափ կանանց
Կեռալ—Եոք ունենալ
Կեկեռ—Կէս
Կրիտ—Կարճ
Կրտել—Կարճեցնել
Կճաս—Կտոր (մսի)
Կովան—Մեծ պնակ
Կորի—Արտ, արտի չափ մը
Կռահել—Կասկածել
Հաւրոզ—Դիշերուան պտուկ
Հրիել—Բաժնել, զատել
Ճառ—Եկեղեցւոյ ջահ
Ճար—1. միջոց, 2. անցք
Ճըլեզ—Պզտիկ, մանր
Մար—Լայնք (կերպասի)
Մժալ—Քիչ, թեթեւ անձրեւ գալ
Մոծիլ—Կայծ
Նօրս—Նօսր
Շեռ-շրռ—Մէջ
Շրեել—Ժողուել (տերեւներ եւ այլն)
Շողիֆ—Թուք
Շոշոր կամ շոշորդ—Սաուեր, խենթ
Շնորհել—Պատկել
Շնֆել—Գողնալ
Պաշ—Աղէկ
Պլաս—Կոտրած սափոր
Պուռք կամ պուռքկա—Խոզովակ
Պողել—Մաքրել
Սրֆել—Հանդարտիլ
Սուսուլիկ—Սրածայր
Վաճառ—Հարսանեկան զգեստ
Փուր—Թեփ ձկան

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

——)·(——

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

«Շարժումի» 14ն թուին մէջ Փ. Պօլսէն թղթակցութիւն մը կար քաղաքիս Թաղ. խորհրդոյ ընտրութեան մասին խօսող։ Ձեր պատուական թղթակցին տուած տեղեկութիւնները թէեւ ամբողջովին ճիշդ են, սակայն կարեւոր կէտ մը չէ յիշատակուած անոնց մէջ։ Ներկայիս կուգամ այդ պակասը լրացնելու։

Քուէարկութեան միջոցին գաւառացի պանդուխտ բեռնակիր մը որ մօտաւորապէս տասը տուրէ ի վեր Ֆիլիպէ կը գտնուի, ընտրողական ժողովին տուած ուրոշումին համեմատ եկաւ իր քուէն տալու։ Նոյն միջոցին, ընտրողական ժողովին ատենապետը, Տօքթ. Փափազեան ամենակոշտ կերպով բաձագանչեց. «Համալին քուէն չընդունուիր»։ Այս անտեղի խօսքին վրայ հոն գտնուող ազգայիններէն ոմանք բողոքեցին տօքթորին դէմ, մասնաւորապէս Տ. Յ. Բազարճըկլեան ազդու կերպով ցուցուց այս տարօրինակ իրաւունքի բռնաբարումը և ըսաւ թէ, եթէ անոնք այս օտարութեան մէջ չարքաշ բեռնակրութեամբ զբաղելու դատապարտուած են, մենք եղած ենք անոր պատճառը։ Հայը սուրբը որ կը նախագահէր ընտրողական ժողովին, կարծես կուզէր ձայնակցիլ տօքթորին անիմաստ բացականչութեան, բայց հոն գտնուող ազգայինները իրենց ձայնը լսելի կարողացան ընել։ Ընտրողական ժողովը լաւ դաս մը առաւ, որ վստահ ենք թէ յառաջիկային անդամմէն ալ «Համալը» քուէի իրաւունքէ զրկել անկարելի պիտի ըլլայ։

Շահապ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Շումլաէն մեզ կը գրեն.

«Օրմանեանի անունը յիշել չի տալու համար քաղաքիս երիտասարդութիւնը պէտք չունեցաւ ճնշում բանեցնելու, քանի որ արդէն բոլորը երիտասարդ և ձեր համաձայն էին»։

— Քաղաքիս մօտերը գտնուած քարահանքի հայ աշխատաւորները ի Նպատ Հայաստանի սովելոց հանգանակութեան ձեռնարկեր են և 150 ֆրանքի չափ հաւաքելով զրկեր են Պատրիարքարան. հանգանակութիւնը դեռ կը շարունակուի։

— Մուշի Ս. Կարապետի վանքին նորոգութեանը համար, Ռուսահայ բարերար մը 1000 ռուբ. նուիրած ըլլալով, վանքին նորոգութեան սկսեր են։ Այս գումարը Պատրիարքարանի միջոցաւ կը զրկուի իր տեղը։

— Նպատին Ցանձնաժողովը որոշեր է 50 ոսկի զրկել Կիւրինի կարօտեալներուն։

Ինչպէս նաեւ ուշադրութեան առնելով Կեսարիոյ Առաջնորդին տեղեկագիրը գաւառին օրբանոցին վիճակին վրայ՝ հարկ դատեր է բացառիկ նպաստ մը ընելանոր. և 50 ոսկիի գումար մը յատկացուցեր է։

— Սանասարեանի կոտակարար Կ. Եղեանց 20 ոսկւոյ գումար մը զրկեր է Պատրիարքարան՝ իբրև կանխավճար արուելու համար այն խանին, որ պիտի գնուի իբրեւ կալուած Սանասարեան վարժարանի։ Մինչեւ հիմա Սանասարեան վարժարանի դրամագլուխը կը կազմէին զանազան արժեթուղթեր. բայց հիմա որոշուած է հաստատուն եկամուտի վերածել այն գումարը, և ասոր համար Պոլիս խան մը կը գնուի 20,000 ոսկիի արժողութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիս 4ին Գերմանական լրագիրներուն Պոլսէն կը հեռագրեն թէ Ռուսական դեսպան Պ. Զինովիէվ քանի մը անգամ խորհրդակցած է հայ գաղթականները հայրենիք վերադարձուելու խնդրի մասին Մեծ Եպարգոսին և արտաքին գործոց նախարարին հետ։

— Խումբ մը տրմատական և ազատական սրպեր Ժընէվի մէջ բողոք մը յայտարարած են Սերպիոյ մէջ տեղի ունեցած խրատութեանց դէմ և օտար մամուլի համակրանքը կը հրաւիրեն դէպի անմեղ ձերբակալուածները։

Երէկ, Պելկրատի զինուորական դատարանի առջեւ դատուելու պիտի ելլար Միլանի վրայ ատրճանակ արձակող և անոր կարծեցեալ մեղսակից արմատական-ազատականները։

— Յուլիս 5ին Դանտիոյ մէջ տեղի ունեցած է թաղումը այն իտալացի և ֆրանսացի զինուորներու, որոնք մեռած էին յուլիս 2ի ընդհարման մէջ։ Ներկայ էին երկու ազգերու հիւպատոսները, հրամանատարներ և սպաներ։

Երկու կողմերն ալ միմեանց համակրանք և ցաւակցութիւն յայտնեցին։

— Մանջուրիոյ (Զինաստան) մէջ աւազակները յարձակած են հոն հաստատուած կօզաքներու վրայ։ Խումբ մը այդ աւազակներէն կոտորած է վաշտ մը կօզաք։ Կը կարծուի թէ այդ գիծը ռուսները պիտի գրաւեն։

— Բէքինէն կը հեռագրեն որ տեղւոյն ամերիկեան դեսպանը հրաման ստացած է միջոցներ ձեռք առնել հովանաւորելու Անգլօ-Ամերիկեան մեծ ընկերութեան շահերը, Զինը զարգացնելու համար։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печати на „Взаимность“ Варна.